# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.10.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/34**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից 23.09.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/34 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

**1. «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 23.09.2017թ. բողոքով հայտնել է, որ «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ի կողմից «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Դասընթացի մասնակիցների կեցություն և սնունդ» ծառայության ձեռքբերման նպատակով 29.08.2017թ. հայտարարվել է «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը սահմանված կարգով հայտ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու համար: Հայտերի բացումը տեղի է ունեցել 13.09.2017թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունը 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից, այնինչ նշված չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի հայտում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես բացակայել է վճարման պահանջագիր՝ մասնակցության հայտի ապահովումը, մինչդեռ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն Պատվիրատուի կողմից կազմակերպված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի պահպանել օրենսդրության պահանջները, «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է չեղյալ համարել «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2017թ. թիվ 2 արձանագրությունը:

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.09.2017թ. ժամը 12:00-ի և 29.09.2017թ. ժամը 11:10-ի նիստերի վերաբերյալ, 29.09.2017թ. ժամը 11:10-ին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**2. <u>«Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

«Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ն էլեկտրոնային եղանակով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է տրամադրել «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-

17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.09.2017թ. ժամը 12:00-ի և 29.09.2017թ. ժամը 11:10-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ի կարիքների «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առաջին անգամ, որը համակարգվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրելով, որ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը, մեկ աշխատանքային օր ժամկետով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակցին շտկել անհամապատասխանությունը:

**3. ԳԲԽ-ԱՄ-2017/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2017/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ի կողմից «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ի կարիքների համար «Դասընթացի մասնակիցների կեցություն և սնունդ» ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Մաստեր Ութայլ» ՍՊԸ-ն և «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 1 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է հետևյալը. ««Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած ծրարում առկա են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջվող բոլոր փաստաթղթերը, դրանք համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, բացակայում է վճարման պահանջագիր՝ մասնակցության հայտի ապահովումը»:

3. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ ««Նուռ Սերվիս» ՍՊԸ-ն չի ներկայացրել վճարման պահանջագրի՝ մասնակցության հայտի ապահովման բնօրինակը: Վերջինիս էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է ծանուցում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ին ներկայացնել փաստաթղթի բնօրինակը»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որի վերաբերյալ որոշվել է համապատասխան հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

5. «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 9 հավելվածով ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի մեջ «Ընկերության անվանումը» դաշտում նշվել է «Նուռ Պլյուս ՍՊԸ» անվանումը, իսկ հայտի ապահովման կից վճարման պահանջագրի «3. Ընկերություն (այսուհետ վճարող)» դաշտում նշվել է «Նուռ Սերվիս ՍՊԸ»:

## 4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի 23.09.2017թ. բողոքը, «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա

հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը ***մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-Ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային***

***առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպես «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ի կարիքների համար «Դասընթացի մասնակիցների կեցություն և սնունդ» ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում, համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 1 արձանագրության 3-րդ կետի, բացակայել է մասնակցության հայտի ապահովումը:

Նույն արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ն չի ներկայացրել վճարման պահանջագրի՝ մասնակցության հայտի ապահովման բնօրինակը: Վերջինիս էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է ծանուցում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում «Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն» միջ. ՀԿ-ին փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.09.2017թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը համարել է բավարար և մասնակցին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 30.09.2017թ. էլեկտրոնային եղանակով Խորհրդին հայտնել է, որ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի հայտի փաթեթից բացակայել է վերը նշված փաստաթղթի բնօրինակը միայն, ինչը լրացվել է մեկ օրվա ընթացքում, մինչդեռ նույն փաստաթղթի կրկնօրինակները (երկու պատճենները) առկա են եղել փաթեթում:

Այսպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.1 կետը սահմանում է, որ մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից (բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը) և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը:

Խորհորդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 1 արձանագրության 3-րդ կետով ամրագրվել է, որ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտում բացակայում է հայտի ապահովումը: Միևնույն ժամանակ նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հայտի ապահովման բնօրինակը:

Դրանից բացի Խորհուրդն արձանագրում է նաև, որ գործում առկա «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի համաձայնագրի մեջ «Ընկերության անվանումը» դաշտում նշվել է «Նուռ Պլյուս ՍՊԸ» անվանումը, իսկ հայտի ապահովման կից վճարման պահանջագրի «3. Ընկերություն (այսուհետ վճարող)» դաշտում նշվել է «Նուռ Սերվիս ՍՊԸ»: Մինչդեռ հայտը ներկայացվել է «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից, հետևաբար հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի մեջ «Ընկերության անվանումը» դաշտում նույնպես պետք է լրացվեր «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի անվանումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը ***մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Ընդ որում նույն կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտում բացակայում է գնային առաջարկը ***կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին***

***անհամապատասխան, ապա մասնակցին չի տրվում հայտում առկա նշված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:***

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի, ինչպես նաև հրավերի ՄԱՍ I-ի 4-րդ կետի 4.2 ենթակետի, 8-րդ կետի 8.2 ենթակետի պահանջների, ենթակա էր մերժման հայտերի բացման նիստում և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կիրառելով Կարգի 41-րդ կետը, ինչպես նաև ճանաչելով «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից, գործել է ոչ իրավաչափ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի 23.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից 23.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել և դադարեցնել «ՈՍՏԱՅՆ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ «Նուռ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ